


Ես նորից գնում եմ դպրոց

Հեղինակ՝ Սյուզաննա Պետրոսյան




Երկար ժամանակ տանը մնալուց հետո
վերջապես գնալու եմ դպրոց՝ հետևելով մի
շարք կարևոր կանոնների:



Առավոտյան՝ մինչ դպրոց գնալը, պետք է խնդրեմ, որ մայրիկս կամ հայրիկս չափեն իմ ջերմությունը:

© «Նախաձեռնություն հանուն կրթական և սոցիալ-իրավական ներառման» ՀԿ





Ես շատ ուրախ եմ, որ նորից հանդիպելու եմ սիրելի ուսուցիչներին, դասընկերներին, բայց հասկանում եմ, որ ամեն ինչ մի քիչ փոխվելու է, և մենք պետք է սովորենք իրարից հեռավորություն պահել:



Ես, ընկերներս և մեր ուսուցչուհիները պետք է արդեն դիմակ կրենք և հետևենք անվտանգության կանոններին:


Ես պիտի միշտ հիշեմ դիմակ կրելու մասին,
չզգեմ, չկորցնեմ և փոխեմ այն 4 ժամը մեկ:



Ձեռքերս պիտի հաճախակի ախտահանեմ.
դրա համար ինձ մոտ պետք է պահեմ
ախտահանիչ նյութ և թաց անձեռոցիկ:



Կարևոր է հիշել, որ չի կարելի խնդրել ուրիշի իրերը կամ փոխանցել. հետևաբար բոլորը պետք է իրենց մոտ ունենան անհրաժեշտ դպրոցական պարագաները:



Ես պետք է հիշեմ, որ դասամիջոցներին մենք մնալու ենք դասարանում և չենք կարող առաջվա նման վազվզել և խաղալ իրար հետ, քայց դա այդքան էլ վատ չէ, ես կարող եմ նստած զրուցել ընկերներին հետ և ավելի շատ քան իմանալ նրանց մասին:





UNESCO Institute for Information Technologies in Education

Ես պիտի հիշեմ, որ մենք հիմա չենք մոտենալու գրատախտակին և տեղից ենք պատասխանելու ուսուցիչների հարցերին:

Ուսուցչուհին չի կարողանա մոտենալ մեզ, քանի որ անվտանգությունից ելնելով՝ պետք է հեռավորություն պահի, որպեսզի մենք բոլորս առողջ մնանք և չվարակվենք:



Այս ընթացքում բուժետից ևս չեմ կարողանա
օգտվել, բայց հոգ չէ, ես ինձ հետ չոր ուտելիք
կարող եմ բերել:



Եթե ծնողներս ասում են, որ որևէ պատճառով չի կարելի դպրոց գնալ, ես չեմ տխրի, քանի որ դասերս կարող եմ անել հեռավար տարբերակով, ինչպես գարնանը:



Ես գիտեմ, որ կարող եմ պահպանել այս նոր կանոնները, քանի որ շատ եմ ուզում նորից հանդիպել իմ դասընկերներին և սիրելի ուսուցիչներին:

